Դաս 23-24. Քրիստոնեական եկեղեցու խորհուրդները

Լաացուցիչ նյութ

Ղազանչեչոց եկեղեցու գաղտնիքը

Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին համարվում է Առաքելական եկեղեցու Արցախի թեմի կենտրոնը: Այն Շուշիի Մայր տաճարն է՝ կառուցված 1868–1887 թթ: Գանձասարից հետո՝ Արցախի երկրորդ կարևորագույն հոգևոր կենտրոնն է:

Եկեղեցու նկուղային սենյակներից մեկը հայտնի է մի խորհրդավոր երևույթով: Դա ընդամենը մի կիսագնդաձև սենյակ է, սակայն ունի շատ հետաքրքիր ակուստիկ հատկություններ: Երբ կանգնում ես նրա կենտրոնում՝ առաստաղի վրա արված անցքի տակ, քո ձայնը անհամեմատ ավելի բարձր է լսվում, սակայն մեկ մետր կողքի վրա կանգնած մարդու համար այդպես չէ, նա հասարակ ձայն է լսում: Առավել ևս շատ հետաքրքիր է լինում, երբ սկսում ես երգել այդ անցքի տակ:

Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց մայր տաճար (Շուշի)